



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Սովորողների մեջ
համագործակցային կարողությունների ձևավորումը
քերականության ուսուցման միջոցով»

Առարկան՝ Ֆրանսերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Հովհաննիսյան Մանուշակ

Ուսումնական հաստատություն՝ Արզականի Խ.Խաչատրյանի
անվան միջնակարգ դպրոց

Երևան 2023

Ներածություն

Համագործակցային կարողությունների ձևավորումը տևական գործընթաց է: Այն պետք է իրականացնել մանրամասն պլանավորված, հետևողական և համբերատար ձևով՝ քայլ առ քայլ ներդնելով համագործակցային ուսուցման տարրերը, մեկ առ մեկ ուսուցանելով համագործակցային հմտություններից յուրաքանչյուրը: Սկզբնական շրջանում (մոտ մեկ շաբաթ) անհրաժեշտ կլինի դասաժամից որոշակի մաս հատկացնել առարկայական (ակադեմիական) բովանդակության շրջանակներից դուրս գտնվող առաջադրանքների կատարմանը: Հետագայում (մեկ-երկու ամիս) այդպիսի առաջադրանքներին հատկացվող ժամանակը կարելի է կրճատել՝ հասցնելով 5-10 րոպեի: Մակայն բոլոր դեպքերում առարկայական նյութի ուսուցումն անհրաժեշտ է իրականացնել համագործակցային ուսուցման մեթոդներով ու հնարներով՝

պլանավորել վարժությունների ընթացքը և սովորողի ներդրումը/անելիքը,

- ստեղծել նպատակների խառնուրդ (ոչ միայն սովորել բովանդակությունը, այլև կազմակերպել կարևոր հմտությունների փորձարկման հնարավորություններ և ապահովել դրանց օգտագործումը որպես բովանդակությունը յուրացնելու միջոց),
- սովորողների հետ համատեղ մշակել համագործակցային համաձայնություններ և աստիճանաբար դրանք սովորեցնելով ստեղծել դասարանական նոր մշակույթ և մթնոլորտ:

• Հատկապես կարևոր է քերականության ուսուցումը, որը հետաքրքիր դարձնելու համար պետք է կիրառել համագործակցային ուսուցման ձևեր, առաջադրանքների կատարման ձևեր:

Քերականության ուսուցումը հաղորդակցական առաջադրանքների միջոցով

Քերականությունը ծագումնաբանորեն «լավ կարդալու և լավ գրելու արվեստ է:

«Encarta-ի հանրագիտարան

Քերականությունը հաճախ դառնում է ուսումնասիրության առանձին թեմա ֆրանսերեն լեզվի ուսուցման գործընթացում: Սակայն օտար լեզուն հաղորդակցական նպատակներով ուսումնասիրելիս քերականական գիտելիքներ ձեռք բերելը վերջնական նպատակ չէ (այս պնդումը չի վերաբերում նեղ մասնագիտական կրթություն ստացողներին, ում համար կարևոր է թե՛ տեսական քերականությունը և թե՛ հաղորդակցականը): Քերականական իմացության վերջնական նպատակն է սովորողին տալ միջոցներ, գործիքներ, որոնք նրան հնարավորություն կտան ճիշտ արտահայտվել, հաղորդակցվել գրավոր կամ բանավոր՝ շարահյուսության կանոնները արտացոլել խոսքի մեջ:

Ինչպես նշում է Ռ. Պ. Միլրուդը՝ անհրաժեշտ է հաղորդակցման ընթացքում առանձնացնել քերականական գեները՝ արտահայտության տարրերը, որոնք կարելի է ընդարձակել ընդունված կանոնների համաձայն: Ֆրանսերենի ուսումնասիրության հիմնական նպատակը հաղորդակցական կարողությունների ձևավորումը և զարգացումն է: Հաղորդակցական մոտեցման նպատակը՝ սովորողին ներգրավել հաղորդակցության մեջ, որպեսզի նա ինչ-որ բան անի. սովորի ընթերցել, խոսել, բացահայտել զգացմունքները...

Ֆրանսերենը կենդանի լեզու է և այն պետք է սովորել հաղորդակցական նպատակներով կիրառելու համար: Ըստ Դ. Հիմեսի «Հաղորդակցման համար բավարար չէ միայն իմանալ լեզուն, տիրապետել լեզվական համակարգին պետք է

հավասարապես կարողանալ այն կիրառել սոցիալական համատեքստում: Հաղորդակցական մոտեցումը կենտրոնացված է լեզվի սոցիալական ասպեկտի վրա (լեզվի ուսուցումը և կիրառությունը), հիմնավորելով այն գաղափարը, որ անհրաժեշտ է ակտիվ հաղորդակցվել, որպեսզի արդեն ձեռք բերած գիտելիքները արդյունավետ լինեն:

Լեզվի գործնական տիրապետումը հնարավոր չէ առանց հիմնական քերականական կառույցների, որոնց կարևոր նախապայմանը խոսքային գործունեության բոլոր տեսակների տիրապետման համար անհրաժեշտ և բավարար քերականական նվազագույն նյութի (մինիմումի) ընտրությունն ու նրա իմացությունն է: Խոսքային նմուշները, որոնք այս կամ այն քերականական կառուցվածքների ներկայացուցիչներ են, որոշակի շարահյուսական և ձևաբանական հատկանիշներով օժտված տիպական դարձվածքներն են, որոնք ապահովում են մատուցվող նյութի արագ ընկալումը: Քերականական կառույցների հիման վրա քերականության ուսուցումը հանգեցնում է հաղորդակցման ընթացքում դրանք օգտագործելուն: Հաղորդակցման պահանջների իրականացման համար առաջին պլան են մղվում քերականական մոդելները, որոնք անմիջականորեն գործածվում են խոսքում: Խոսքային գործունեության բնագավառում քերականությունը գործում է որպես հաղորդակցման կարևոր միջոց: Քերականության տիրապետումը, մի կողմից հնարավորություն է տալիս սահմանված կանոնների միջոցով կառուցել ճիշտ նախադասություններ (պրոդուկտիվ քերականություն), մյուս կողմից՝ քերականական երևույթները ճանաչել տեքստում (ռեցեպտիվ քերականություն): Դա նշանակում է, որ ուսուցիչը սովորողին պետք է մղի արտահայտվելու, նկարելու, խաղալու կամ գործելու՝ զարգացնելու համար օտար լեզուն ըմբռնելու կարողությունը: Այս

գործընթացում նպաստավոր են այն առաջադրանքները, որոնք ներկայացնում են իրական հաղորդակցական իրավիճակներ: Ջուտ լեզվական բնույթի առաջադրանք արտահայտող՝ նախադասությունները դարձնել հարցական/ժխտական առաջադրանքներում, սովորողները ուշադրություն են դարձնում լեզվի գուտ ձևական կողմին: Վարժությունների այս տեսակները գուրկ են շարժառիթից և հաղորդակցում չեն ապահովում: Առավել արդյունավետ են այն վարժությունների տիպերն ու տեսակները, որոնք պարունակում են այս կամ այն հաղորդակցական խնդիր, օրինակ՝ մի բան հաստատել կամ ժխտել, համաձայնել իր ընկերոջ/գրուցակցի ասածին, զարմանք արտահայտել և այլն: Նմանատիպ վարժությունները հնարավորություն են տալիս ուշադրությունն ուղղել առանձին քերականական կառուցվածքներին և դիտել դրանք համապատասխան իրադրությունների շրջանակներում: Իրադրային վարժությունների կիրառումը լեզվի ուսուցումը մոտեցնում է հաղորդակցական բնական պայմաններին: Դրանք հիմնականում պլանավորվում են կենդանիներ, ճանապարհորդություններ, տոներ, տարեդարձեր, դպրոց, ընտանիք և այլ թեմաներով և կարող են լինել ընդօրինակման, տեղադրման, փոխակերպման, հարց ու պատասխան ակնկալող վարժություններ: Քերականորեն գրագետ հաղորդակցման կարողություններն ու հմտությունները զարգացնող ռեցեպտիվ-պրոդուկտիվ, լեզվական-խոսքային վարժությունները կապված են միմյանց հետ: Այս կամ այն վարժության իրադրային բնույթը պետք է դիտվի որպես ընդհանուր պահանջ օտար լեզվի ուսուցման գործընթացում:

Գոյություն ունեն մի շարք վարժություններ, որոնց միջոցով կարելի է անցում կատարել գուտ լեզվական բնույթի(exercices formels) առաջադրանքներից հաղորդակցական խնդիր պարունակող վարժություններին(exercices communicatifs):

Փորձենք ներկայացնել այդպիսի մի շարք.

- Թերի վարժություն(exercices trous)՝ լրացնել բացթողումները:

- Նախադասության ձևափոխման վարժություններ. (ներկա ժամանակով տրված նախադասությունները դնել անցյալ ժամանակով, երկու նախադասություն միացնել հարաբերական դերանուններով և այլն):

- շրճի՝»É ÝĚ³¹³ěáōĀŪáōÝÁ:

- Կազմել նախադասություն (կազմել 5 նախադասություն հրամայական եղանակով). այս դեպքում խոսքը վերաբերում է ուղղորդված պարզ վարժություններին, որոնք ենթադրում են այն քերականական կառույցների կիրառումը, որոնք ծանոթ են սովորողին թե՛ առանձին նախադասություններ կազմելիս, թե՛ նախադասությունների շարք ստեղծելիս: Սովորողը գործ ունի և՛ շարադասության և՛ շարահյուսության հետ:

- Ապա հետևում են այն վարժությունները, որոնք սովորողից պահանջում են կազմել կապակցված խոսք տրված թեմայով (օրինակ՝ կազմել նախադասություններ նկարի շուրջ):

- Այնուհետև սովորողին կարելի է հանձնարարել կազմել կապակցված խոսք ավելի գլոբալ թեմայի շուրջ՝ դուրս գալով ուսումնասիրած նյութի նեղ շրջանակներից: Մասնակի հողի կիրառության համար՝ ընտրել մի ճաշատեսակ և ընկերոջը/գրուցակցին ներկայացնել ճաշատեսակի պատրաստման համար անհրաժեշտ պարագաները, կամ կրավորական կառույցի (forme passive) համար՝ նկարագրեք ձեր երկրի վարչական կառուցվածքը և այլն): Այսպիսի վարժությունները նպատակաուղղված են քերականության իմացությունը հաղորդակցական իրավիճակներում հնարավորինս շատ կիրառելուն, այսինքն՝

քերականությունից անցում կատարել գրավոր խոսքի(expression écrite),ապա քանավոր հաղորդակցության (expression orale): Այդ անցումը կարելի է ներկայացնել այս տեսքով.

Թերի վարժություն	Նախադասության ձևափոխման վարժություն	Ավարտել նախադասութ-յունները	Զրույցի, խոսքի կառուցում տրված նախադասություն-ներով	Զրույցի, խոսքի կառուցում առանց տրված նախադասությունների
------------------	-------------------------------------	-----------------------------	---	---

Ֆորմալ վարժություններ —————> Հաղորդակցական վարժություններ

Դասավանդման ստրատեգիաներում անհրաժեշտ է զերծ մնալ քերականության և խոսքի (expression) տարանջատումից և աշխատանքն ուղղել քերականական կառույցների ուսուցմանն ու կիրառմանը հաղորդակցության ժամանակ: Ուսումնական ձեռնարկները՝ դասագրքեր, քերականության ձեռնարկներ, հազեցած են մեծ քանակով ֆորմալ վարժություններով: Իսկ հաղորդակցական վարժությունները ընդհակառակը սակավաթիվ են, կամ դրանցում խիստ տարանջատված են, քերականական վարժություններե և խոսքային վարժություններ: Դա հաճախ բարդացնում է հաղորդակցական վարժությունների կազմումը քերականականը խոսքայինի հետ համատեղելիս: Համեմատաբար ավելի հեշտ է հաղորդակցական վարժություններ կազմել բայական ձևերի հիման վրա այն առումով, որ, օրինակ անցյալ կատարյալն օգտագործվում է պատության մեջ իրադարձությունների փոփախությունները ներկայացնելու համար, ըղձական եղանակը՝ վիրտուալ բնագավառի համար, մասնակի հոդերը՝ ճաշատեսակների բաղադրատոմսերի համար և այլն: Բայց

նույնը չի կարելի ասել մյուս խոսքի մասերի վեաբերյալ, օրինակ՝ հարաբերական դերանունները, հոդերը դժվար է ներմուծել հաղորդակցական վարժությունների մեջ: Հաղորդակցական վարժությունը տարբերվում է ֆորմալ վարժությունից սովորողին տրվող ազատության մակարդակով: Դա նշանակում է, որ քերականական նպատակը, որ հաճախ նշում է ուսուցիչը, այստեղ բացակայում է:

Ներկայացնենք առաջադրանքների օրինակներ, որոնք արտացոլում են անցումը ֆորմալ վարժություններից՝ հաղորդակցական վարժությունների:

Տրված են 5 վարժություններ կրավորական կառույցի (forme passive) վերաբերյալ: Դասավորենք դրանք ըստ վերոհիշյալ տրամաբանական զարգացման:

Վարժություն 1

Utilisez le passif pour rédiger un article de journal à partir des éléments proposés.

- On a cambriolé l'appartement de M. X.
- On a volé les objets les plus précieux.
- La police a interrogé les témoins.
- Le commissaire Néfin a mené l'enquête.
- Au bout de 2 semaines, la police a arrêté les malfaiteurs et les a conduits chez le commissaire.

Վարժություն 2

Mettez les phrases suivantes à la forme passive.

1. L'architecte dessine ces plans.
2. On a fouillé l'appartement.

3. L'ambassadeur ouvrira la conférence.
4. Le jury a publié les résultats hier après-midi.
5. La mairie va modifier le plan de circulation.

Վարժություն 3

Complétez les phrases avec la forme qui convient.

1. Les députés européens (élire) tous les 5 ans .
2. La pyramide du Louvre (construire) par l'architecte Pei.
3. L' autorisation doit (signer) par vos parents.
4. De nouvelles lignes aériennes (inaugurer) prochainement entre l' Asie et la France.
5. La peine de mort (abolir) en France en 1981.

Վարժություն 4

Rédigez un texte de présentation du château de Versailles en vous appuyant sur les indications ci-dessous et en utilisant des passifs.

- Situation: à quelques kilomètres de Paris
- Construction: architecte Mansart pour le roi Louis XIV
- Décoration: l' artiste Lebrun
- Aménagement des jardins et des parcs: le Nôtre
- Le plus grand château de France
- Louis XIV l'habite à partir de 1663

- 4 millions de visiteurs par an

Վարժություն 5

Présentez au choix un des thèmes suivants à propos de votre pays:

- la situation géographique
- l'organisation administrative
- le système politique

Դասավորելով ըստ տրամաբանական զարգացման, կունենանք հետևյալ հերթականությունը. վ. 3 ; վ. 2 ; վ.1 ; վ. 4 ; վ. 5 :

Վարժությունների այս իմաստային հերթականությունն ապահովում է անցումը ֆորմալ վարժություններից հաղորդակցական վարժություններին:

Անկատար անցյալ (imparfait) ժամանակի գործածության համար կարելի է կազմել հետևյալ պահանջները ներկայացնող առաջադրանքներ.

1. Comparez le travail des femmes d'aujourd'hui à celui d'hier. Qu'est-ce qui a changé?
2. Que savez-vous de la condition ouvrière ou paysanne dans votre pays au XIXèsiècle?
3. Votre grand-père vous raconte son enfance: «Quand j'étais jeune. J'habitais

j'allais à pied à l'école ... » Imaginez la suite à l'imparfait en utilisant les pronoms personnels (je. tu. il ...)

4. Racontez la vie d'un personnage célèbre.

Անկատար անցյալ (imparfait) ժամանակը շատ հաճախ հանդիպում ենք բնագիր նյութերում (documents authentiques), օրինակ՝ երգերում: Հետաքրքիր, հիշվող և հեշտ ընկալելի է բնափր նյութերի հետ աշխատանքը, օրինակ՝ «Արձակուրդները ծովափում» երգը ("Les vacances au bord de la mer" Michel Jonasz): Նախ, ներքոհիշյալ առաջադրանքի օգնությամբ ճշտում ենք, որ imparfait ժամանակը անցյալի ժամանակաձևերից է, ապա կրկնում ենք վերջինիս գործածությունը:

Վարժություն 1

Vrai / faux? Justifier vos réponses avec les mots du texte.

Exemple : Le chanteur raconte ce qu'il va faire l'année prochaine.

Faux : (On allait... On regardait... - verbes à l'imparfait)

1. Enfant, il partait en vacances en famille.
2. D'habitude, ils allaient à la montagne.
3. La famille n'était pas très riche.
4. Le soir, ils mangeaient au restaurant.
5. Le chanteur détestait ces vacances au bord de la mer.

Այնուհետև անցնում ենք հաջորդ առաջադրանքներին, որոնց միջոցով կիրառում ենք հաղորդակցական քերականությունը: Վարժությունը հանձնարարելուց առաջ կարելի է սովորողին հիշեցնել imparfait ժամանակի գործածության դեպքերը:

L'imparfait est un temps du passé. On l'utilise:

- pour décrire (le décor, le cadre, etc.) - C' était en été. Il faisait beau.
- lorsqu' une action est habituelle ou répétée - On partait tous les ans au mois d'août.
- lorsqu' une action est interrompue - Je regardais les bateaux quand j'ai vu un dauphin.

Վարժություն 2

Relevez tous les verbes à l' imparfait dans la chanson et expliquez s'il s'agit:

- d'une description
- d' une action habituelle
- d' une action interrompue

Վարժություն 3

Vous êtes l' auteur de la chanson. Un jour, votre famille gagne des millions. Après cela, comment se passaient vos vacances annuelles?

Ecrire en quelques phrases avec des verbes à l' imparfait.

Exemple: Après avoir gagné au loto, tous les étés, nous partions au bord de la mer. Nous allions... On faisait... J' aimais... C'était...

Հաղորդակցական քերականության ուսուցանման նպատակով կարելի է առաջարկել տարբեր թեմաներով առաջադրանքներ:

La question par: «est-ce que?»

A partir des réponses données, imaginez ce que le médecin demande à son patient (pensez à utiliser est-ce que):

-

- Non. J'ai mal au ventre.

-

- Oui. 38°5

-

- Non. J'ai même grossi.

-

- Non. Aucune allergie:

Interrogation avec inversion.

- On distribue à chaque apprenant une planche comportant une vingtaine de photos avec un prénom sous chaque photo. Chacun à tour de rôle choisit une photo: le partenaire la devine en posant des questions auxquelles on ne peut répondre que «oui» ou «non».

Les partitifs: du, de la

• A partir des éléments suivants faites la liste de courses d'une ménagère:

-Radis

-Salade

-Tranches de jambon

-Amandes

-Potiron

-Safran

-Courgette

-Sel et pain

- Imaginer un dialogue dans un café entre un serveur et des clients qui commentent.
- A partir des éléments suivants décrire les ressources de ces pays:
 - Chine: blé, chevaux, riz, coton, tabac
 - Guinée Equatoriale: cacao, bois, café, pétrole
 - Italie: olive, oranges, maïs, tabac
- Expliquer une recette de cuisine en indiquant précisément quelle quantité de chaque ingrédient vous utiliser.
 - Շատ արդյունավետ են խաղ-վարժությունները, որոնք կատարելիս և՛ սովորում են քերականական կառույցները և՛ դրանք կիրառում հաղորդակցման նպատակով: Օրինակ՝ խամաճիկներ (Les pantins) խաղը imparfait-ի համար, Ժաքն ասաց (Jacques a dit) խաղը impératif-ի համար: Les pantins

Matériel: des bandeaux.

Déroulement :

Les enfants sont deux par deux, l'un à les yeux bandés et l'autre dirige son camarade dans la classe (ou à l'extérieur), vers un but défini au préalable, de la manière suivante: «Fais deux pas devant, trois pas à droite, quatre pas en arrière, etc.». Une fois, le binôme ayant atteint sa destination, inverser les rôles.

- Jacques a dit

Déroulement :

Les élèves sont debout. L'un d'eux est placé devant le groupe, il est le meneur de jeu. Il donne des consignes aux élèves: «Asseyez-vous! Levez-vous! Levez le bras droit! Fermez les yeux! etc.». Si la consigne orale est

précédée de«Jacques a dit», les élèves doivent exécuter la consigne. Si elle n'est pas précédée de«Jacques a dit», il ne faut surtout pas exécuter la consigne. Les élèves qui se trompent sortent du jeu. Le gagnant est le dernier élève qui reste. Changer régulièrement de meneur de jeu.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով խոսքային գործունեության չորս տեսակներին ուղղված ռազմավարությունները ֆրանսերենի ուսուցման գործընթացում՝ հանգեցի այն եզրակացությանը, որ լեզվական կարողությունների և հմտությունների զարգացումը հնարավոր է միայն համապատասխան պայմանների, մեթոդների, գործունեության եղանակների ապահովման դեպքում: Կատարված տեսական և գործնական հետազոտական աշխատանքերի արդյունքում հանգեցի հետևյալ եզրակացություններին.

1. Կիրառելով տարբեր ռազմավարություններ, կարելի է հասնել ցանկալի արդյունքների: Վարժություններն օգնում են աշակերտին՝ ինքնուրույն և գիտակցորեն ճիշտ կապակցել բառերն ու նախադասությունները:
2. Խոսքային գործունեության ուսուցման հաջողությունն ապահովող հիմնական գործոնի դերում հանդես են գալիս ընկալողական և վերարտադրողական վարժությունները, որոնցով ձևավորվում, զարգացվում և կատարելագործվում են խոսքային հմտություններն ու կարողությունները:
3. Վարժությունների համակարգը կազմելիս մի կողմից հաշվի ենք առել սովորողների մտավոր, հոգեբանական, խոսքամտածողական առանձնահատկությունները, որոնք գործում են յուրացման ժամանակ, իսկ մյուս կողմից՝ խոսքային կարողություններն ու հմտությունները ձևավորող հաջորդականությունը:
4. Ելնելով ֆրանսերենի քերականության ուսուցման առանձնահատկություններից անհրաժեշտ եղավ սովորողներին քերականական նյութն ավելի մատչելի և ընկալելի դարձնելու նպատակով կիրառել իրադրային խոսքային նմուշներ:

5. Վարժությունները դպրոցում օգտագործվեցին նաև խաղերի, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով, որոնք նպաստեցին սովորողների բանավոր խոսքի, քերականության, հիշողության, ստեղծագործելու, արագ կողմնորոշվելու կարողությունների զարգացմանը:

6. Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ խաղերի կիրառումը, դասապրոցեսը դարձնում է ավելի դյուրին՝ ձևավորելով հաղորդակցական կարողություններ հմտություններ, ինչպես նաև արժեք և վերաբերմունք լեզվակիր ժողովրդի, նրա մշակութային տարրերի վերաբերյալ:

7. Դասապրոցեսում ժամանակակից մեթոդների և հնարների կիրառումը նպաստում է նաև պետական չափորոշիչների պահանջներով և առարկայական բովանդակությամբ՝ գիտելիքներ, կարողություններ/ հմտություններ և արժեքային համակարգ ձևավորելուն:

8. Դասապրոցեսում ժամանակակից մեթոդների և հնարների կիրառումը նպաստում է նաև պետական չափորոշիչների պահանջներով և առարկայական բովանդակությամբ՝ գիտելիքներ, կարողություններ/ հմտություններ և արժեքային համակարգ ձևավորելուն: Այսպիսով, կատարված աշխատանքների արդյունքներից ելնելով, եկա այն եզրահանգմանը, որ առաջ քաշված ռազմավարությունները մեծ դեր են խաղում հաղորդակցական կարողությունների և հմտությունների ձևավորման գործում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Encyclopédie Microsoft Encarta 2003, 1993-2002, Microsoft Corporation (Logiciel)
2. HYMES.D (1991), vers la compétence de communication, CREDIF, Hatier.
3. Мильруд Р. П. Коммуникативность языка и обучение разговорной грамматике (упрощенным предложениям) // Иностранные языки в школе.-N2.-2002
4. BERARD, E.(1991) L'approche communicative. Théorie et pratiques, Coll. Techniques de classe, Clé International, Paris.